ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 108

ք. Երևան 15.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00236854, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 6-34) միջև 11.09.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/50-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությունը 2023թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան նոյեմբերի 30-ը պետք է մատակարարեր 20,000 կգ «Քլորակիր», որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերության կողմից մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԻՓԻԷՍ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ